ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 46-Լ **«01» օգոստոսի 2024 թ.**

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Կրթություն» բաժնի 17-րդ կետի 17.1-2 ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝
   1) արհեստագործական և միջին մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների գյուղատնտեսության և հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի բակալավրի կրթական ծրագրերով հեռակա, իսկ հեռակա ուսուցում չունեցող կրթական ծրագրերի համար՝ առկա ուսուցմամբ փորձնական ընդունելության կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
   2) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերը և ընդունելության տեղերը, որոնցով 2024-2025 ուսումնական տարում թույլատրվում է արհեստագործական և միջին մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների գյուղատնտեսության և հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների կրթության շարունակումը, ու արհեստագործական և միջին մասնագիտական գյուղատնտեսության և հարակից ոլորտների մասնագիտությունները՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

/պարտականությունները կատարող/

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի օգոստոսի 1-ի N 46-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ԱՄՄՈՒՀ) գյուղատնտեսության և հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների (այսուհետ՝ հավակնորդ) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ՀԱԱՀ) բակալավրի համապատասխան կրթական ծրագրերով փորձնական ընդունելության հետ կապված հարաբերությունները:

2. Հավակնորդների ընդունելությունը ՀԱԱՀ-ում առաջնահերթ կազմակերպվում է արհեստագործական և միջին մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների գյուղատնտեսության և հարակից ոլորտների մասնագիտությունների՝ սույն կարգի շրջանակներում ընդունելություն կազմակերպելու համար հաստատված ցանկին (այսուհետ՝ նաև հավելված N 2) համապատասխան, վճարովի հիմունքով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ունեցող հավակնորդների:

3. Սույն կարգով ընդունելություն կազմակերպելու համար ՀԱԱՀ ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է հավակնորդների դիմումների ընդունելության վերաբերյալ հայտարարություն՝ նշելով դիմումների ընդունման վայրը, ժամկետները, ըստ մասնագիտությունների ուսման վարձի չափը, ըստ մասնագիտությունների տեղերի թիվը և այլն:

4. Հավակնորդների փաստաթղթերը ընդունվում են առկա (հեռակա ուսուցման ձև չունեցող կրթական ծրագրերով) ուսուցման համար մինչև օգոստոսի 30-ը, իսկ հեռակա ուսուցման համար՝ մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ:

5. Փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

1) դիմում՝ ուղղված ՀԱԱՀ ռեկտորին,
2) ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի պատճենը,
3) չորս լուսանկար (3x4 չափսի).

4) անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական).

5) զինվորական գրքույկ կամ կցագրման վկայականի պատճենը (միայն արական սեռի հավակնորդների համար).

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում):

6. Եթե ՀԱԱՀ ընդունվելու հավակնորդների թիվը գերազանցում է հավելված N 2-ով հաստատված ըստ կրթական ծրագրերի տեղերի թիվը, ապա հանձնաժողովը հավակնորդների ընտրությունն իրականացնում է մրցութային հիմունքներով՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

1) գերազանցության ավարտական փաստաթուղթ (գերազանցության դիպլոմ).

2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ներդիրի գնահատականների առավելագույն միջին թվաբանական (միջին թվաբանականը հաշվարկելիս անցում է կատարվում 20 միավորային համակարգի և այն կլորացվում է տասնորդականի ճշտությամբ).

3) պետական ամփոփիչ ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ:

7. Եթե ՀԱԱՀ ընդունվելու հավակնորդների թիվը չի գերազանցում հավելված N 2-ով հաստատված ըստ կրթական ծրագրերի տեղերի թիվը, ապա այդ թափուր տեղերում կարող են ընդունվել, առաջին հերթին, ՀԱԱՀ կազմում գործող, այնուհետև՝ հավելված N 2-ում չնախատեսված մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած նաև այլ ԱՄՄՈՒՀ-ների շրջանավարտները:

8. Մրցույթն անցկացվում է մինչև սեպտեմբերի 2-ը՝ առակա ուսուցման համար, և մինչև հոկտեմբերի 31-ը՝ հեռակա ուսուցման համար:

9. Հանձնաժողովի ներկայացրած ընդունելության արդյունքների հիման վրա ՀԱԱՀ-ի ռեկտորը մինչև սեպտեմբերի 5-ը՝ առկա ուսուցման համար, և մինչև նոյեմբերի 15-ը՝ հեռակա ուսուցման համար, հրամանագրում է հավակնորդներին և 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացնում հաշվետվություն (Ձև 1):

10. Հրամանագրված ուսանողները ՀԱԱՀ են ներկայացնում ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի բնօրինակը:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի օգոստոսի 1-ի N 46-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ, ՈՐՈՆՑՈՎ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասիչ	**Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնագիտությունը, կրթական ծրագիրը**	**Տեղերի թիվը**	**Համապատասխան արհեստագործական և միջին մասնագիտական մասնագիտությունները**
052201.00.6	**Բնապահպանություն և բնօգտագործում**		
	052201.02.6 Ագրոէկոլոգիա **հեռակա**	15	• Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում • Անտառային և անտառպուրակային տնտեսություն • Վայրի բույսերի վերարտադրություն, հավաքագրում և մթերում • Գյուղատնտեսագիտություն • Ջերմատնային տնտեսություն / Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա • Ջերմատնային տնտեսություն

071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**		
	071601.05.6 Տրանսպորտային լոգիստիկ համակարգեր **հեռակա**	30	• Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) • Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում
071804.00.6	**Ագրարային ճարտարագիտություն**		
	071804.01.6 Մեքենասարքավորումների ճարտարագիտություն **հեռակա**	30	• Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում • Գյուղատնտեսության մեքենայացում • Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում • Էլեկտրամատակարարում (ըստ ճյուղերի) • Էլեկտրական մեքենաներ և ապարատներ • Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ • Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա • Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում • Էլեկտրալուսավորման և ուժային սարքավորումների էլեկտրամոնտաժում • Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում • Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում

	071804.02.6 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն **հեռակա**	30	• Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում • Հողաշինարարություն • Ջրամատակարարում և ջրահեռացում • Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանություն • Հողային ռեսուսների կառավարում • Քաղաքաշինական կադաստր • Ջերմատնային տնտեսություն
	071804.03.6 Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ **հեռակա**	15	• Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում • Գյուղատնտեսության մեքենայացում • Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ • Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա • Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում • Էլեկտրալուսավորման և ուժային սարքավորումների էլեկտրամոնտաժում • Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում • Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա

072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**		
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա **հեռակա**	80	• Կաթի և կաթնամթերքների տեխնոլոգիա • Հացաթխման, մակարոնային և հրուշակեղենի տեխնոլոգիա • Մսի և մսամթերքի տեխնոլոգիա • Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա • Բուսաբուծական արտադրանքի պահպանում և վերամշակում • Հանրային սննդի տեխնոլոգիա • Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա • Գինեգործություն և հյութերի արտադրություն
	072101.02.6 Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն հեռակա	35	• Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն • Գինեգործություն և հյութերի արտադրություն • Բուսաբուծական արտադրանքի պահպանում և վերամշակում
	072101.03.6 Սննդամթերքի անվտանգություն **հեռակա**	25	• Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում) • Կաթի և կաթնամթերքների տեխնոլոգիա • Հացաթխման, մակարոնային և հրուշակեղենի տեխնոլոգիա • Մսի և մսամթերքի տեխնոլոգիա • Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա • Բուսաբուծական արտադրանքի պահպանում և վերամշակում • Հանրային սննդի տեխնոլոգիա • Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն • Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա • Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում

081101.00.6	**Ագրոնոմիա**		
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա **հեռակա**	30	• Գյուղատնտեսագիտություն • Ջերմատնային տնտեսություն / Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա • Վայրի բույսերի վերարտադրություն, հավաքագրում և մթերում • Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում
	081101.02.6 Բույսերի պաշտպանություն **հեռակա**	15	• Գյուղատնտեսագիտություն • Ջերմատնային տնտեսություն / Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա • Վայրի բույսերի վերարտադրություն, հավաքագրում և մթերում • Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում • Ջերմատնային տնտեսություն
	081101.03.6 Ջերմատնային ագրոտեխնոլոգիա **հեռակա**	20	• Ջերմատնային տնտեսություն / Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա • Գյուղատնտեսագիտություն • Գյուղացիական ֆերմերային տնտեսության կազմակերպում • Ջերմատնային տնտեսություն
081102.00.6	**Անասնաբուծություն**		
	081102.02.6 Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա **հեռակա**	20	• Ձկնաբանություն և ձկնաբուծություն • Անասնաբուժություն • Գյուղատնտեսագիտություն • Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում • Մեղվաբուծություն
084101.00.6	**Անասնաբուժություն**		
	084101.01.6 Անասնաբուժություն **առկա**	50	• Ձկնաբանություն և ձկնաբուծություն • Անասնաբուժություն • Գյուղատնտեսագիտություն • Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում • Մեղվաբուծություն • Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության

			հավաստում (սերտիֆիկացում) • Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն
	071804.04.6 Ճշգրիտ գյուղատնտեսություն **առկա**	35	• Ռոբոտաշինություն • Մեխատրոնիկա • Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի) • Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում • Գյուղատնտեսության մեքենայացում • Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում • Էլեկտրամատակարարում (ըստ ճյուղերի) • Էլեկտրական մեքենաներ և ապարատներ • Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ • Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա • Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում • Էլեկտրալուսավորման և ուժային սարքավորումների էլեկտրամոնտաժում • Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում • Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում • Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա
	084101.02.6 Անասնաբուժական սանիտարարական փորձաքննություն **հեռակա**	45	• Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում) • Անասնաբուժություն • Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն • Ձկնաբանություն և ձկնաբուծություն • Մեղվաբուծություն • Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում

082101.00.6	**Անտառային տնտեսություն**		
	082101.01.6 Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում **հեռակա**	15	• Անտառային և անտառպուրակային տնտեսություն • Վայրի բույսերի վերարտադրություն, հավաքագրում և մթերում • Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում • Գյուղատնտեսագիտություն • Ջերմատնային տնտեսություն / Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա • Ջերմատնային տնտեսություն

Ձև 1

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների կրթությունը ՀԱԱՀ -ում շարունակելու վերաբերյալ

Անունը, ազգանունը, հայրանունը	Ուսումնառած ԱՄՄՈՒՀ-ի անվանումը	ԱՄՄՈՒՀ-ում ուսումնառած տարեթիվը	Ուսումնառած մասնագիտության անվանումը և որակավորումը	ՀԱԱՀ-ի համապա-տասխան կրթական ծրագրի անվանումը և որակավորումը	Այլ տվյալներ